Պարոն/Տիկին _____ *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան _____

«18» 11 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան,
   - Ռիտա Գևորգյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ)՝

- հեռահաղորդակցության վարչության պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ,
- իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռիգա, Լատվիա, 2025 թվականի նոյեմբերի 11-12-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանց (EaPeReg):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել EaPeReg ցանցի լիագումար նիստին և ԵՄ-ում և

Արևելյան գործընկերության երկրներում «Թվային տասնամյակ» փաստաթղթի և թվային ենթակառուցվածքների կարգավորման վերաբերյալ աշխատաժողովին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ EaPeReg ցանցի լիագումար նիստի ընթացքում ցանցի և ցանցում գործող աշխատանքային խմբերի նախագահողների և EaPeReg ցանցի անդամ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են նիստի օրակարգը, ներկայացվող թեմաները և փաստաթղթերը, 2025 թվականին կատարված աշխատանքները, 2026 թվականի աշխատանքային ծրագիրը, EaPeReg ցանցի միջազգային համագործակցությունը և գործընկեր կազմակերպությունների հետ հետագա համագործակցության խորացմանն ուղղված քայլերը, ինչպես նաև 2026 թվականի ընթացքում իրականացվող աշխատանքները և դրանց բաշխվածությունը ցանցի տարբեր անդամների միջև:

Մասնավորապես՝ «ԵՄ-ն հանուն թվայնացման» (EU4Digital) նախաձեռնության փորձագիտական խմբի ներկայացուցիչները ներկայացրին 2025 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները, որոնք ուղղված էին ԵՄ ԱլԳ երկրների 5G ցանցերի զարգացման վերլուծությանը, ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործմանը, լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացմանը, լայնաշերտ շուկայի վերլուծությանը, ձայնային զանգերի վերջնավորման շուկայի վերլուծությանը, ինչպես նաև ռոումինգի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրմանը: Նշվեց, որ EU4Digital նախաձեռնության երկրորդ փուլն ավարտվում է 2026 թվականի հուլիս ամսին և դեռևս հստակեցված չէ նախաձեռնության հետագա աշխատանքների հնարավոր ձևաչափը:

ՀԾԿՀ-ն, որպես EaPeReg ցանցում գործող երեք աշխատանքային խմբերից (ռադիոհաճախականությունների, ռոումինգի և կարգավորող մարմինների անկախության ու լայնաշերտի հարցերով) երկուսի՝ ռոումինգի և կարգավորող մարմինների անկախության ու լայնաշերտի հարցերով խմբերի նախագահող և համանախագահող ներկայացրել է աշխատանքային խմբերի շրջանակում անցած տարվա ընթացքում իրականացված աշխատանքները և կայացած հանդիպումների արդյունքները: Աշխատանքային խմբերի շրջանակում 2025 թվականի ընթացքում կազմակերպվել է երկու հանդիպում՝ 2025 թվականի ապրիլին Քիշնևում (Մոլդովա) և հոկտեմբերին Նիկոսիայում (Կիպրոս), որոնց ընթացքում քննարկվել են խմբերի կողմից իրականացվող գործողությունները և EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ համատեղ իրականացված վերլուծությունները:

Նիստի ընթացքում քննարկվել է նաև միջազգային այլ ցանցերի հետ համագործակցության և տարածաշրջանային համագործակցության կարևորությունը: Մասնավորապես՝ էլեկտրոնային հացորդակցության եվրոպական կարգավորող մարմինների (BEREC), BEREC գրասենյակի, Եվրամիջերկրական կարգավորողների խմբի (EMERG), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) ներկայացուցիչները բարձր և արդյունավետ են գնահատել 2025 թվականի ընթացքում EaPeReg և միջազգային գործընկերների համագործակցությունը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին նաև ԵՄ ԱլԳ երկրներից Մոլդովայի, Ուկրաինայի և ԵՄ միջև ռոումինգի սակագների նվազեցման և ԵՄ-ում գործող Roam Like at Home (RLAH) շրջանակին միանալու առանձնահատկությունները: ԵՄ ԱլԳ երկրների ստանձնած հանձնառության համաձայն՝ միջազգային ռոումինգի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրումը ենթադրում է այդ երկրների միջև միջազգային ռոումինգի սակագների նվազեցում:

Նիստի շրջանակում Լիտվայի և Լեհաստանի ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչները ներկայացրի իրենց կարգավորող մարմինների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք ուղղված են սպառողների շահերի պաշտպանությանը:

Ներկայացվեցին նաև ցանցի 2025 թվականի նախագահության կողմից իրականացված ծրագրերը և աշխատանքները և 2026 թվականի նախագահողի և փոխնախագահողի թեկնածությունները: Դեռևս ընթացիկ տարվա առաջին լիագումար նիստի ընթացքում ՀԾԿՀ-ին առաջարկվել էր ստանձնել EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահությունն, իսկ ՀԾԿՀ-ն, իր հերթին, ելնելով 2022 թվականի նախագահության հաջողված փորձից, փոխնախագահության համար առաջարկել է Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակի (CTU) թեկնածությունը: Ընտրության արդյունքում ՀԾԿՀ-ն միաձայն ընտրվեց EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահող, իսկ CTU-ն՝ փոխնախագահող:

2026 թվականի նախագահության ընտրության գործընթացից հետո ՀԾԿՀ պատվիրակության կողմից ներկայացվեց EaPeReg ցանցի 2026 թվականի միջոցառումների ծրագիրը և կազմակերպվող հանդիպումների օրացույցը: ՀԾԿՀ-ի, որպես EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահողի ընտրությամբ և ձևավորված գործընկերային ավանդույթի համաձայն՝ նախատեսվում է քննարկել ցանցի երկու լիագումար նիստերից մեկը Երևանում կազմակերպելու հարցը:

Միջոցառման երկրորդ օրը կայացավ ԵՄ-ում և Արևելյան գործընկեր երկրներում թվային տասնամյակի և թվային ենթակառուցվածքների կարգավորման վերաբերյալ աշխատաժողովը, որի ընթացքում EU4Digital նախաձեռնության ներկայացուցիչները խոսեցին ԵՄ-ում թվայնացման մակարդակի վերլուծության նպատակով հավաքագրվող թվային ենթակառուցվածքների ցուցանիշների և «Թվային տասնամյակ» փաստաթղթի մշտադիտարկման առանձնահատկությունների, ինչպես նաև մոտ ապագայում նախատեսվող զարգացումների մասին: Եվրոպական հանձնաժողովի համապատասխան գլխավոր տնօրինության ներկայացուցիչը խոսեց վերջնավորման վճարների մասին ընդունված որոշման կիրառման ուսումնասիրության և վերանայման արդյունքներից:

7.Հանդիպումները, ելույթները՝ Միջոցառման ընթացքում հանդիպումներ են կայացել ցանցի անդամ ԵՄ և ԵՄ ԱԼԳ այլ կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ: Միջոցառման ընթացքում քննարկված նյութերը և կայացած ելույթները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.eap-events.eu/ehome/index.php?eventid=200293446&:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Վերոնշյալ միջոցառման արդյունքներով ՀԾԿՀ-ն ընտրվել է EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահող, իսկ Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակը (CTU)՝ փոխնախագահող, որի կապակցությամբ որոշվել է CTU-ի, ինչպես նաև EaPeReg ցանցի Troika-ի (աշխատանքային խմբերի նախագահներ, նախորդ, ներկա և հաջորդ տարվա նախագահող երկրներ) հետ քննարկել 2026 թվականի աշխատանքային ծրագիրը, իրականացվելիք գործողությունների հաջորդականությունը և աշխատանքի կարևորագույն ուղղությունների բաշխվածությունը, որոնք կապահովեն ցանցի գործունեության արդյունավետությունը:

Որոշվել է նաև, պարբերաբար կազմակերպել ցանցի նախագահության հանդիպումներ, ինչը թույլ կտա ապահովել ցանցի բնական աշխատանքը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ ՀԾԿՀ ներկայացուցիչները, որպես EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահող, պարբերական հանդիպումներ կանցկացնեն CTU ներկայացուցիչների հետ՝ ընթացիկ աշխատանքները քննարկելու նպատակով, ինչպես նաև EaPeReg ցանցի Troika-ի հետ՝ աշխատանքային ծրագրի իրականացումը քննարկելու նպատակով:

Միևնույն ժամանակ, առաջարկվում է քննարկել, որպես EaPeReg ցանցի 2026 թվականի նախագահող երկիր, 2026 թվականի հունիսին նախատեսվող՝ EaPeReg ցանցի 27-րդ լիագումար նիստը ՀԾԿՀ-ի կողմից Երևան քաղաքում կազմակերպելու հնարավորության հարցը:

Գործուղվող ---------- 17.11.2025թ. **Ա.Հունանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 17.11.2025թ. **Հ.Ստեփանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 18.11.2025թ. **Ռ.Գևորգյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 1035-ՀՆ,Հրաման 1036-ԳՔ 03.11.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ՝ **Արմեն Հունանայան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան՝ **Ռիտա Գևորգյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ **ք.Ռիգա /Լատվիա/**

5. Գործուղման ժամկետները **10.11.2025-13.11.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ,** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արմեն Հունանյան	Զարուհի Ստեփանյան	Ռիտա Գևորգյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	81	81	81	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	35,650	35,650	35,650	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	142,599	142,599	142,599	427.797
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		142.599	142.599	142.599	427.797

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **17.11.2025թ.**